ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 20 » փետրվար 2026թ. No 865 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՎԵՐԱԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 40-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության արդյունավետության, և որակի գնահատման N 01/765-26 առ 16.02.2026թ. փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վերագրանցման ընթացակարգով գրանցել թվով 4 դեղ՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցամատյանում լրամշակման կատարումը՝ ավելացնելով վերագրանցման մասին տվյալները:

4.Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ.Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Դեղի վերագրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է նախորդ հավաստագրի գործողության ժամկետը լրանալու հաջորդող օրվանից:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X 

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2026 թվականի փետրվարի «20» - ի  N865 - Ա հրամանի

## Վերագրանցված դեղերի ցանկ

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ | Հավաստագրի գործողության ժամկետը լրանալու օրը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Էրինիտ Թաթֆարմ | պենտաէրիթրիտիլի տետրանիտրատ | դեղահատեր | 10մգ; (30/3x10/) բլիստերում | Թաթքիմֆարմպրեպարատի ԲԸ, 420091 Թաթարստանի Հանրապետություն, Կազան, Բելոմորսկայա փ. 260 | Ռուսաստան | Թաթքիմֆարմպրեպարատի ԲԸ, 420091 Թաթարստանի Հանրապետություն, Կազան, Բելոմորսկայա փ. 260 | Ռուսաստան | Դ | 23847 13.02.2026 | 13.11.2025 |
| 2 | Օֆտագել | կարբոմեր 974Պ | ակնադոնդող | 2,5մգ/գ; պլաստիկե սրվակ-կաթոցիկ 10գ | Սանտեն ԲԸ, Կելոպորտինկատու 1, 33100 Տամպերե- բաց թողնման հսկող, Ուրսաֆարմ Արցնայմիտել ԳմբՀ, Ինդուստրիշտրասե 35, 66129 Սաարբրուկեն, Գերմանիա- բալք արտադրող, փաթեթավորող, որակի հսկող | Ֆինլանդիա | Սանտեն ԲԸ, Նիիտիհաանկատու 20, 33720 Տամպերե | Ֆինլանդիա | ԱԴ | 23848 13.02.2026 | 17.05.2026 |
| 3 | Հիդրոկորտիզոն Թաթֆարմ | հիդրոկորտիզոն (հիդրոկորտիզոնի ացետատ) | ակնաքսուք | 5մգ/գ; 3գ ալյումինե պարկուճ, 5գ ալյումինե պարկուճ | Թաթքիմֆարմպրեպարատի ԲԸ, 420091 Թաթարստանի Հանրապետություն, Կազան, Բելոմորսկայա փ. 260 | Ռուսաստան | Թաթքիմֆարմպրեպարատի ԲԸ, 420091 Թաթարստանի Հանրապետություն, Կազան, Բելոմորսկայա փ. 260 | Ռուսաստան | Դ | 23849 13.02.2026 | |
| 4 | Ացիկլովիր Թաթֆարմ | ացիկլովիր | քսուք տեղային կիրառման | 50մգ/գ; 10գ ալյումինե պարկուճ | Թաթքիմֆարմպրեպարատի ԲԸ, 420091 Թաթարստանի Հանրապետություն, Կազան, Բելոմորսկայա փ. 260 | Ռուսաստան | Թաթքիմֆարմպրեպարատի ԲԸ, 420091 Թաթարստանի Հանրապետություն, Կազան, Բելոմորսկայա փ. 260 | Ռուսաստան | ԱԴ | 23850 13.02.2026 | 30.12.2025 |